ԲՌՆԱԳԱՂԹՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՈՒՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԽՍՀՄ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Յոյս ենք յայտնում, որ քննարկելով մեր հայրենիքի համար բախտորոշ նշանակութիւն ունեցող հարցերը, համագումարը անուշադրութեան չի մատնի հարիւր հազարաւոր ընչազուրկ փախստականներին՝ ըստ ազգային յատկանիշի տեղահանուած հայերին, ադրբեջանցիներին, ռուսներին, թուրք-մեսխեթցիներին, որոնք սեփական երկրում աքսորեալներ են դարձել:

Երեք տարի է Ղարաբաղում հեղուում է անմեղ մարդկանց արիւնը:

Այսօր Գետաշէնում, Շահումեանի շրջանում սպանութիւններ են կատարում ԽՍՀՄ Պաշտպանութեան նախարարութեան կադրային զօրամասերը, ՕՄՕՆի համազգեստ հագած աւազակային կազմակերպութիւնները:

Շարունակութիւնը՝ էջ 15 →

ԲՌՆԱԳԱՂԹՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ...

← Սկիզբը՝ էջ 5

Մենք, հայազգի փախստականներս, համոզուած ենք, որ դարձել ենք ԽՄԿԿ կենտկոմի կուսակցական քրմերի կողմից տասնամեակներ շարունակ իրագործուող ապաշնորհ ազգային քաղաքականութեան զոհը: Ադրբեջանցիների հետ հակամարտութիւնը յատկապէս հրահրուել է երկրում հասունացող թէ տնտեսական, եւ թէ քաղաքական ճգնաժամի պայմաններում:

Երկրում փախստականների կարգավիճակ սահմանելու անհրաժեշտութեան մասին վերջին երեք տարիների ընթացքում երկրի նախագահին, Պաշտպանութեան, ՆԳ նախարարներին, երկրի ՊԱԿի նախագահին, ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորների նախորդ համագումարներին, ԽՍՀՄ պատգամաւորներից մի քանիսին ուղղուած մեր դիմումները արդիւնք չեն տուել:

Ադրբեջանում եւ Հայաստանում իրենց մշտական բնակութեան վայրերից հարկադրաբար հեռացած քաղաքացիներին, մեր մարդկային արժանապատուութիւնը ստորացնող չափերով փոխհատուցում տալու մասին 1990թ. Ապրիլի 7ի որոշման կատարումը սպառնալիքի տակ է դրուած այդ հանրապետութիւններում միջոցներ չլինելու պատճառով:

Կենտրոնի փլուզումը երկրի փլուզումը չէ:

Այսօր մենք ապրում ենք ուրիշ երկրում, որը պարտաւոր է իր տարածքում դառնալ մարդու իրաւունքների երաշխաւորը:

Այսօր ԽՄԿԿին արժանին է հատուցուած, նրա կառուցուածքները լուծարուել են, ունեցուածքն ու միջոցները՝ ազգայնացուել:

Մենք պահանջում ենք, որ ժողովրդական պատգամաւորների համագումարը իր օրակարգում արտացոլի բռնագաղթուածների հիմնահարցը, քննարկի եւ ընդունի փախստականների կարգավիճակը:

Ժողովրդական պատգամաւորների համագումարը պէտք է քննարկի բնակարանային շինարարութեան գործում բռնագաղթուածներին օգնութիւն ցոյց տալու հիմնադրամի ստեղծման հնարաւորութիւնը եւ գործնական որոշումներ ընդունի՝ 1980թ. Հոկտեմբերի 17ի թիւ 136 որոշմանը համապատասխան բնակարանային ունեցուածքի կամաւոր ապահովման գծով ապահովագրական գումարների վճարումը արագացնելու համար:

Այս պայմաններում մենք արդարացի ենք համարում, որ ԽՄԿԿի բռնագրաւուած միջոցները փոխանցուեն հանրապետութիւններին՝ իրենց թողած բնակարանների թալանուած ունեցուածքի դիմաց, համաձայն՝ 1990թ. Ապրիլի 7ի թիւ 329 որոշման քաղաքացիներին փոխհատուցում վճարելու համար: